

*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հովտամեջ համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ համայնքի ղեկավարի աշխատակազմում համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հովտամեջ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար (ծածկագիր 1.2-1)

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն:

- Սույն պաշտոնի անձ նագրի 10-րդ <<ա>> ենթակետում նշված աշխատանքային ստաժի և փորձի անհրաժեշտ չափանիշներ,

- սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <<բ>> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն

- ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2011 թվականի նոյեմբերի 7-ին ժամը 12.00-ին, Հովտամեջի գյուղապետարանի շենքում:

Մրցույթին մասնակցել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրերին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հովտամեջի գյուղապետարան կամ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ-ի և ՀԳՄ հարցերով վարչություն /հասցե Աբովյան 71/:

Հեռախոս՝ 0-237-2-07-70, 2-76-49

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10.00-ից 16.00, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ Հովտամեջի գյուղապետարանում:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2011 թվականի հոկտեմբերի 17-ը: